

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 08

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան

26.11.2022թ.

1. Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 2022 թվականի նոյեմբերի 26-ի հերթական նիստին.

ա) մասնակցում էին՝

Ա. Հարությունյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար

Վ. Քերոբյան - ՀՀ էկոնոմիկայի նախարար, Խորհրդի նախագահ

Ա. Դանիելյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար, Խորհրդի անդամ

Ն. Տերյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ

Ա. Հարությունյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ

Է. Էլբակյան - ՀԱՊՀ մինչքուհական կրթության գծով պրոռեկտոր , Խորհրդի անդամ

Կ. Զիլինգարյան - «Սպառողների խորհրդատվության կենտրոն» նախագահ, Խորհրդի անդամ

Տ. Քեյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի աջակցության ծրագրերի ղեկավար, Խորհրդի անդամ

Ա. Հայրապետյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ

Կ.Սահակյան - ԵՊՀ դասախոս, տնտեսագիտական գիտությունների թեկնածու, Խորհրդի անդամ

Գ. Սահակյան - Խորհրդի քարտուղար

Ա. Կոտոլյան - Տեսչական մարմնի ղեկավար

Ա. Մկրտչյան - Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ

Ա. Բաբայան - «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի տնօրենի պաշտոնակատար

բ) բացակայում էր՝

Լ. Նանուշյան - ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ

Քվեարկության օրակարգային հարցեր.

2. Օրակարգում ընդգրկված հարցերն են՝

ա) Հաստատել ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2023թ. ստուգումների տարեկան ծրագիրը:

Ձեկուցող՝ Ա. Կոտոլյան

բ) Հաստատել ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2023թ. գործունեության ծրագիրը:

Ձեկուցող՝ Ա. Կոտոլյան

3. Տեղի ունեցան մտքերի փոխանակություն, որի ընթացքում՝

ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Ա. Հարությունյանը նշեց, որ ինտենսիվ աշխատանքներ են տարվում տեսչական մարմինների և տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի գործունեության արդյունավետության, ինչպես նաև Խորհրդի դերի բարձրացման ուղղությամբ՝ լինելով հետևողական նախկինում կայացված որոշումների կատարման նկատմամբ: Ա. Հարությունյանը հավելեց, որ անհրաժեշտ է կիրառել թվային գործիքակազմ ստուգումների ծրագրի կազմման աշխատանքներում անաչառություն ապահովելու, ինչպես նաև գործունեությունը դադարեցրած տնտեսվարող սուբյեկտներ ստուգումների ծրագրում չընդգրկելու նպատակով: Ա. Հարությունյանը բարձրացրեց նաև տեսուչների կողմից հնարավոր կոռուպցիոն ռիսկերի, ինչպես նաև նյութական պահուստի ոլորտում առկա օրենսդրական խնդիրներին վերաբերող հարցեր:

Ա. Կոտոլյանը համաձայնեց ստուգումների ծրագրի կազմման աշխատանքների թվայնացման անհրաժեշտության հետ: Ա. Կոտոլյանը հավելեց, որ մինչ ստուգումների ծրագիր տնտեսվարող սուբյեկտին ընդգրկելը Տեսչական մարմինը օգտվում է ՊԵԿ-ի պաշտոնական կայքից և գործունեությունը դադարեցված տնտեսվարող սուբյեկտներ ծրագրում չի ընդգրկում: Իսկ ինչ վերաբերվում է տեսուչների կողմից հնարավոր կոռուպցիոն ռիսկերին, ապա այն զսպելու նպատակով Տեսչական մարմնի ղեկավարը, նրա տեղակալը կամ ստորաբաժանման ղեկավարը պարբերաբար կատարում են այցելություններ խախտումներ չհայտնաբերված տնտեսվարող սուբյեկտների

գործունեության իրականացման վայր: Ա.Կոտոլյանը համաձայնեց, որ նյութական պահուստի ոլորտում առկա են օրենսդրական խնդիրներ, ինչի կապակցությամբ Տեսչական մարմինը իր և տնտեսվարող սուբյեկտների դիտարկումները ներկայացրել է լիազոր մարմնին:

Վ.Քերոբյանը նշեց, որ համաձայն 2023 թվականի գործունեության ծրագրի Տեսչական մարմինը իրականացրած ստուգումների արդյունքում 75% տնտեսվարող սուբյեկտների մոտ խախտում է հայտնաբերում, ինչը վկայում է Տեսչական մարմնի վատ աշխատանքի մասին: Ա.Կոտոլյանը հակադարձեց, նշելով, որ խախտումների բացահայտման բարձր տոկոսը վկայում է Տեսչական մարմնի կողմից տնտեսվարող սուբյեկտների ճիշտ թիրախավորման և ռիսկերի ճիշտ գնահատման մասին: Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Ա.Մկրտչյանը հավելեց, որ 2023 թվականի ստուգումների ծրագրի նախագծում ընդգրկվել են այնպիսի ռիսկային տնտեսվարող սուբյեկտներ, որոնց առնվազն 75%-ի մոտ կհայտնաբերվեն խախտումներ: Ա.Մկրտչյանը նշեց նաև, որ ստուգումների ծրագիրը կազմելիս Տեսչական մարմինը իրականացրել է բավականին խորը վերլուծություն՝ նրանում ընդգրկելով ռիսկային տնտեսվարող սուբյեկտներ, որոնք պարբերաբար և մեծ ծավալի ոչ պարենային արտադրանք են ներմուծել ՀՀ տարածք: Վ.Քերոբյանը նշեց, որ անհրաժեշտ է ստեղծել տոտալ վերահսկման մեխանիզմներ, այսինքն արտադրանքը շուկայահանելիս պարզ լինի այն սերտիֆիկացված է, թե ոչ:

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ա.Հայրապետյանը նշեց, որ անհրաժեշտ է մեխանիզմներ ներդնել Խորհրդի աշխատանքների արդյունավետության բարձրացման ուղղությամբ, ինչպես նաև ստեղծել ալգորիթմ ստուգումների ծրագրի կազմման համար:

Վ.Քերոբյանի այն հարցին, թե Տեսչական մարմինը իրազեկման ոլորտում ինչ նորարարություն է կատարել, Ա.Կոտոլյանը նշեց հետևյալը.

ՊԵԿ-ի հետ քննարկումների արդյունքում վերջինս Տեսչական մարմնի կողմից վերահսկման ենթակա արտադրանքներ ներմուծող տնտեսվարող սուբյեկտներին 15 օրը մեկ պարբերականությամբ հաղորդագրությունների տեսքով տեղեկացնում է, որ իրենց կողմից ներմուծված արտադրանքը պետք է համապատասխանի տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին: Ա. Կոտոլյանը հավելեց, որ այս եղանակը համարում է արդյունավետ և պետական բյուջեի վրա չի առաջացնում լրացուցիչ բեռ:


Վ.Քերոբյանը առաջարկեց մերժել Տեսչական մարմնի 2023 թվականի ստուգումների ծրագիրը: ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Ա. Հարությունյանը առաջարկեց, որպեսզի չխաթարվի Տեսչական մարմնի բնականոն գործունեությունը՝ հանձնարարել տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակին կազմել ստուգումների ծրագիր բաղկացած 60 տնտեսվարող սուբյեկտից:

Որոշվեց միաձայն՝

ա) Մերժել ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2023 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը:

բ) Հաստատել ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2023 թվականի գործունեության ծրագիրը:

Խորհրդի նախագահ՝




ստորագրություն

Վ.Քերոբյան



Խորհրդի քարտուղար՝



ստորագրություն

Գ.Սահակյան